ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ ԹԻՎ 49-Ա

<<27>> մարտի 2024 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ (ԾԱԾԿԱԳԻՐ 2.3-10) ԱՐԱ ԽՈՐԵՆԻ ՂԱՆԴԻԼՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 11-րդ կետի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշմամբ սահմանված ցանկի 16-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ (ծածկագիր 2.3-10) Արա Խորենի Ղանդիլյանի դիմումը

հրամայում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ (ծածկագիր 2.3-10) Արա Խորենի Ղանդիլյանին տրամադրել 2023 թվականին չօգտագործված ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդները:

2.Արձակուրդի տևողությունը 24 աշխատանքային օր՝ 2024 թվականի ապրիլի 01-ից մինչև մայիսի 06-ը ներառյալ:

3.Ամենամյա արձակուրդի ընթացքում Արա Խորենի Ղանդիլյանի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (ծածկագիր 2.3-11) Գեղամ Վաչագանի Մաթևոսյանին:

4.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել արձակուրդի հաշվարկումն ու վճարումը:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

<<27>> մարտի 2024 թվական
Գյուղ Ախուրյան